

ՏԱՐՐԵՐԻ ԵՒ ՖԻՋԻՔԱԿԱՆ ԵՐԵՒՈՑԹՆԵՐԻ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ

Երկինք.—Մի ժամանակ երկինքը շատ մօտ է եղել երկրին. մի օր մի կին ցորնի հասկով սրբել է երեխայի աղտեղութիւնը և վերև շպուտել: Երկինքը, որին դիպել է այդ հասկը, բարկացել է և վերև բարձրանալով անիծել ցորենին, որ այլևս հասկ չտայ: Այդպէս և եղել է, ցորենը, որ առաջները ամբողջովին ծածկւում էր հասկով՝ ցցւում է դատարկ ցողունով: Իսկ այն շները սկսում են կոնձ-կոնձալ և հաց խնդրել երկնքից: Ի վերջոյ երկինքը մեղքանում է շներին և պատուիրում ցորենին՝ միմիայն ծայրում մի փոքրիկ հասկ բռնել: Բայց մարդիկ այդ շների բաժինն էլ նրանցից խլում են և իրենք սննդւում դրանով:

Արեւ.—Արեւածագին պառաւ կանայք դառնում են դէպի արեգակը, խաչակնքւում և աղօթում: Շնորհականը առաջին անգամ արեւ տեսնելիս՝ խաչակնքւում է. նորածնին առաջին անգամ տանից դուրս հանելիս դարձնում են դէպի արեգակը և աղօթում. «Ա՛ մըրըմէր ըրէքնակ, տիւ իմ ըրեխիս պահես», «ա՛ ըրէքնաք, իմ իրեսս քու վետի տակը, տիւ իմ բալէքը պահես»: Մարդը մեռնելիս երեսը դէպի արեւելքն են դարձնում և այդ ուղղութեամբ էլ թաղում: Արեւով օրհնում են, ինչպէս՝ ապրի արեւդ, կանաչ արեւ ըլիս, երկար արեւ ըլիս. արեւով անիծում, ինչպէս՝ արեւդ մեռնի, արեւդ խաւարի: Նոյն արեւով երդւում են. Արեւը վկայ, արեւդ վկայ, քոռ եշեմ արեւին... արեւը իմ բէալան (պատիժ) տայ, էն արդար ըրէքնակը վկայ ա. իմ փայ ըրէքնակը խւարի թա ես...

Պատմում են, թէ սկզբում արեւը շատ մօտ է եղել երկրին. մի օր մի կին սրբել է իւր մանկան աղտեղութիւնը և շորը վերև ձգել: Սա դիպել է արեգակին և նա բարկանալով բարձրացել է վերև, հեռացել մարդկանցից:

Մի անգամ հարսնւորները հարս ու փեսայի հետ անցնում էին Քափաս լեռով, երբ արեւը սկսեց մայր մտնել: Թագուորը խնդրեց արեգակին մի քիչ սպասել, մինչև որ վտանգաւոր տեղը կանցնեն: Բարի արեգակը սպասեց, բայց երբ վե-

բարդարձաւ իւր մօր մօտ, սա սաստիկ բարկացաւ նրա վրայ ուշանալու պատճառով: Արեգակը պատմեց պատճառը, բայց չար մայրը աւելի ևս բարկացաւ և անիծեց Հարսնետոններին, որ քար դառնան: Իսկոյն կատարուեց մօր անէծքը և բոլոր Հարսնետոնները քար դարձան և մինչև այսօր էլ կանգնած են Քափասի ստորոտում:

Լուսին. — Լուսինը նորեկիս ամէնքը նայում են նրան, խաչակնքում և անմիջապէս իրենց հայեացքը ձգում մի բաղդատոր համարուած երեխայի և կամ դրամի վրայ, որպէսզի այդ լուսնի տեղուածեան միջոցում բաղդատոր լինին կամ շատ դրամ ստանան: Երբ հնար չի լինում բախտատոր երեխայի և կամ դրամի վրայ նայել, աչքերը երկինք են ձգում, որ՝ գոնէ չար, վատ բանի չհանդիպեն: Մանուկներին բարձրացնում են դէպի լուսինը և աղօթում. «Ա՛ մօր ծոցէն տիւս եկող կարմիր լսներակ, տիւս իմ բեխիս պահես»:

Գորտնուկ (БОРОДАВКА) ունեցողը նոր լուսնին է նայում և ասում.

«Լուսինը նոր՝

Գորտնուկը չոր»:

Եւ այս այն հաւատով, որ լուսնի զօրութեամբ գորտնուկը չորանայ:

Լուսնի 1, 3 և 7 ծնուածը բարի և երջանիկ է լինում:

Լուսնի առաջին քառորդում ծաղիկ հիւանդութեամբ բռնուածը կը մեռնի, մի որեւէ հիւանդից արիւն առնելը վտանգաւոր հետեանք կունենայ, նորապսակ զոյգը եթէ թագվերացումը կատարի, կը հիւանդանայ:

Արեգակն ու լուսինը քոյր և եղբայր են համարոււմ. ըսկըզբում արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն է ման գալիս եղել: Մի օր քոյր արեգակը խնդրել է եղբայր լուսնին, որ իրեն ազատէ գիշերը շրջելուց, որովհետեւ վախենում է, ցերեկն էլ չի կամենում ման գալ, որովհետեւ ամաչում է, բոլորն էլ իրեն են նայում:— Լա՛ւ, ասում է եղբայր լուսինը, դու ցերեկը շրջիր որ չվախենաս, իսկ ես գիշերը կը շրջեմ. և որպէսզի քեզ չնախն, ա՛ռ այս մի թուփ ասեղները և ցցիր նրանց աչ-

քերում, որոնք կրնային քեզ: Եւ այնուհետեւ արեւն սկսեց ցերեկը ման գալ և ասեղներով ծակել իրեն նայողներին:

Արեգակի և լուսնի խառնուճը բացատրում են այսպէս. Մի եօթը գլխանի հրէշ (ուշափ) կայ, որ բնակւում է դժոխքում. երբ նրա ուտեստը պակասում է, նա կատաղած դուրս է գալիս երկիրս կործանելու և բռնում է արեգակի կամ լուսնի առաջը, որ մարդիկ լոյսից և տաքութիւնից զրկուած կոտորուեն: Սակայն եղորմած Աստուածը նրան կրկին նետում է դժոխքը: Այս վիշապին վնասելու նպատակով՝ խաւարման միջոցին հրացաններ են ձգում դէպի այդ լուսատուները:

Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ արեգակն ու լուսինը քոյր և եղբայր են եղել. արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն են շրջել: Բայց քոյր արեգակը վախեցել է գիշերը շրջելուց և յայտնել է մօրը, սա էլ պատուիբել է լուսինին գիշերը շրջել, և երբ նա ընդդիմացել է՝ մայրը մի ապտակ է տուել երեսին և ստիպել անշուշտ կատարել իւր հրամանը: Նա էլ խռոված սկսել է շրջել, բայց շուտ-շուտ կամակորւում և թաք է կենում: Մօր տուած ապտակի հետքերը այժմ էլ նկատելի են:

Ասողեր. — Սրանք բաժանւում են երկուսի՝ բարի և չար: Բարի աստղի տակ ծնուածը բարի, երջանիկ է լինում, չարինը՝ չար, թշուառ: Սրանցից իւրաքանչիւրը պատկանում է մի մարդու և երբ վերջինիս օրհասը մօտենում է՝ նրա աստղը վայր է ընկնում և քառասուն օրից յետոյ այդ մարդն էլ մեռնում է:

Աստղերից Մեծ արջի համաստեղութիւնը կոչւում է «Օխթը սնամէր»: Սրանց մասին պատմում են, թէ դրանք մի ժամանակ եօթը սսնամէր են եղել, որոնց ընդհանուր քաւորը քաղցից մեռել է, որովհետեւ իւրաքանչիւր սանամէր մտածել է, թէ միւսը վր հոգայ: Աստուած այս դէպքը յաւերժացնելու համար, այդ եօթը սանամօրն էլ աստղերի է փոխարկել:

Յարդ-գողի ճանապարհ. — Սրան կոչում են դարմանագողի ճանապարհ: Պատմում են, թէ մի ուղտապան 45 ուղտ ունէր, մի անգամ յարդը պակասեց. նա գնաց 30 համար դրա-

ցիներից փոխ վերցրեց, իսկ 15 համար գնեց: Երկրորդ անգամ երես չունենալով փոխ խնդրելու, նա փորձեց զողանալ, բայց սաստիկ քամի բարձրացաւ և բոլոր յարդը դողացողի հետ ցրիւ տուեց երկնքում:

ԱՅՃՐԵԼ.— Յիսուսը և Ալին միասին ցորեն են ցանել, հրնձել, կախել. բայց բաժանելիս Ալին խել է Յիսուսի բաժինը, որից դառնացած Յիսուս արտասուել է: Նրա արտասունքներից գոյացել են անձեւ:

Երես.— Երբ երկինքը կապում է և արտերն ու այգիները սկսում են չորանալ, գիւղացիները և նոյնիսկ քաղաքացիները դիմում են հետեւեալ միջոցների, որ անձրև գայ:

1) Ընտրելով մի երկու մարդ, մի քահանայի հետ ուղարկում են Արթնայ սարը, Արթնայ գերեզմանից մի քար բերելու: Սրանք պատ պահելով և աղօթելով բարձրանում են ահագին լեռու, համբուրում Արթն ճգնաւորի գերեզմանը և մի քար վերցնում, փաթաթում մետաքսեայ թաշկինակների մէջ և բերում: Երբ տեղ են հասնում, նրանց դիմաւորում են ահագին բաղմուլիւն և քահանաներ, ու տանում քարը եկեղեցու սեղանի վրայ դնում: Հետեւեալ օրը աւազ-երեցը գրկում է այդ քարը և խաչով-խաչվառով՝ քահանաներով ու ահագին բաղմութեամբ գնում դէպի այգիներն ու արտերը, թափոր անում և հանդիսատար կերպով այդ քարը ձգում մի որևէ ջրի մէջ: Հատարացնում են, թէ անձրևն սկսւմ է անմիջապէս տեղալ: Եւ երբ բաւականաչափ գալիս է անձրև, գնում այդ քարը հանում են ջրից, որպէսզի անձրևը դադարի:

2). Երեկոները եկեղեցում հսկում են անում. կանայք ոտարորիկ թափւում են եկեղեցի և յորդ արցունքներով անձրև հայցում:

3). Երկու կին լծւում են արօրին, մինն էլ տղամարդի շորեր հագած, մի մեծ զլխարկ զլխին ծածկած իրը հոտաղ քրշում է կանանց և գետի մէջ մտնելով ջրի ընթացքին հակառակ վարում են:

Երբ շարունակ անձրև է գալիս և արև չի ծագում, քահանայի տանից աւել են գողանում և չոր քարի վրայ դրած Վրակ տալիս:

ՈՐՈՏՈՒՄ. — Առաջները թուխպը ընդունում էր իբր Աստուած: Մի կոյր մարդ բարկանալով Աստծու վրայ, որ իրեն պրկել է տեսողութիւնից, վերցնում է թթու լոշ և շարտում թխալի վրայ: Թուխպը սաստիկ բարկանում է, և գոռգոռում կոյրի վրայ: Այդ գոռգոռոցից առաջանում է որոտումն:

Նաև ասում են.

Երկնքում չար պառաւներին տոպրակների մէջ ձգելով՝ գլորում են, դրանց գոռգոռոցից յառաջանում է որոտումը:

Եղիա մարգարէն երկնքի վրայ քառաձի կառքով անցնելիս անիւների դառնալուց որոտումն է յառաջանում, իսկ մըտրակի զարկից՝ կայծակ:

Երբ առաջին անգամ որոտում է՝ ասում են.

Քրրէ կարկուտ

Անկաճկիւռիք*)

Եթէ առաջին անգամ որոտումը Մարտ ամսի կիսին պատահի, այդ տարի հուձը շատ լաւ կը լինի:

Կարկուտ գալիս վառում են Աւագ Ուրբաթ օրը մի քիչ վառուած և պահուած մոմը, զանգակները խփում, կասկարանքը ձգում դուրս՝ ոտները դէպի վեր. շամփուրը ցցում գետնին, մի կարկուտ չորս կտոր արում, որպէսզի կարկուտը դադարի գալ, իսկ արտերը կարկտից ազատ պահելու համար՝ Զատիկից մինչև Եղիա մարգարէի տօնը բոլոր երկուշաբթի օրերը կերակի են պահում, մասնաւոր մատաղնիւր անում, իսկ Եղիա մարգարէի տօնին՝ հասարակաց մատաղ անում, ցանքսերը օրհնում:

Կայծակը խփելիս պառաւները գլխներին քար, իսկ ատամների տակ ասեղ են դնում և հացառը ձգում դուրս, որպէսզի կայծակը իրենց տանը չխփէ:

Ո Գ Ի Ն Ե Ր Ի Պ Ա Զ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Ոգիներ բարի եւ չար

Պահապան հրեշտակ. — Ամեն մի մանուկ մի պահապան հրեշտակ ունի, որ շարունակ սաւառնում է նրա շուրջը և

*) Ականջի մօտի ատամներ-սեղանատամներ: